# ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ ԵՎ ԼԵՎՈՆ ՄԵԾԱԳՈՐԾԻ՝ ԹԱԳԱՎՈՐ ՕԾՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ *

*ՀՏԴ 322 (2-67)* *DOI: 10.52063/25792652-2023.1.16-22*

**ՆԵԼԼԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ**
*Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի*
*Աստվածաբանության և հայ եկեղեցու պատմության ամբիոնի*
*ավագ լաբորանտ և հայցորդ,*
*ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն*
*nelli.zhamkochyan.92@mail.ru*
*ORCID: 0000-0001-6060-4728*

***Հոդվածի նպատակն է ուսումնասիրել Կիլիկիայի հայոց թագավորության ճանաչման և Լևոն Մեծագործի՝ թագավոր հռչակման գործընթացը և դրանում Հռոմի պապական աթոռի և սրբազան կայսրության կատարած դերը:***

***Մեր աշխատության մեջ խնդիր ենք դրել վեր հանել Կիլիկիայի թագավորության ճանաչման գործընթացի մանրամասնությունները, և թե ինչպիսի դերակատարում են ունեցել պապական աթոռի ներկայացուցիչները:***

***Օգտագործված մեթոդների մեջ կարելի է առանձնացնել պատմավերլուծական մեթոդը և ժամանակակից գիտական գրականության վերլուծության մեթոդը:***

***Կատարել ենք հետևյալ եզրահանգումները: Կիլիկիայի հայոց թագավորությունը հիմնվել է միջազգային բարդ պայմաններում, որին ակտիվ մասնակցություն են ունեցել Կիլիկիայի հայ հոգևորականները: Հայկական պետության ստեղծման գործում կարևոր դերակատարում են ունեցել հայկական պատվիրակությունների այցերը Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիս և Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներ, ինչպես նաև դավանաբանական խնդիրների փոփոխության հարցում հայ հոգևորականության դիրքորոշումը և ձեռնարկած քայլերը: Առանձնահատուկ նշանակություն է ունեցել արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացու կատարած դերը:***

***Լևոն Բ Ռուբինյանը Կիլիկիայի հայոց թագավոր օծվեց Հռոմի կաթոլիկ եկեղեցու ներկայացուցիչ, Մայնցի արքեպիսկոպոս Կոնրադ Վիտելսբախի կողմից հայոց կաթողիկոս Գրիգոր Ապիրատի ձեռամբ: Թագավոր օծվելու արարողությանը ամբողջ կազմով ներկա էին Կիլիկիայի հայկական պետության բոլոր թեմական առաջնորդները և բարձրաստիճան հոգևորականությունը:***

**Հիմնաբառեր՝** *Կիլիկիա, Լևոն Մեծագործ, եկեղեցի, հոգևորականություն, թագավորություն, պապական աթոռ, Բյուզանդական կայսրություն, եպիսկոպոս, դավանանք, պատվիրակություն:*

---

* Հոդվածը ներկայացվել է 09.03.2023թ., գրախոսվել՝ 23.03.2023թ., տպագրության ընդունվել՝ 30.04.2023թ.:

## Ներածություն

Կիլիկիայի հայոց պետության կյանքում կարևոր նշանակություն ունի 12-րդ դարի վերջին քառորդի և Լևոն Մեծագործի կառավարման շրջանի պատմության՝ հատկապես պետություն-եկեղեցի հարաբերությունների ուսումնասիրությունը: Ցայժմ մասնագիտական գրականության մեջ առանձին ուշադրության չեն արժանացել պետաքաղաքական կառավարման համակարգում հայ հոգևորականության դերակատարման թեմատիկան, հատկապես նրանց մասնակցությունը Կիլիկիայի հայկական թագավորության հռչակման և Լևոն Մեծագործի թագադրման հարցում:

Հայտնի է, որ նշյալ ժամանակաշրջանում Կիլիկիայի հայոց իշխանապետությունը օրեցօր հզորանում էր, և նպաստավոր պայմաններ էին ստեղծվում թագավորության հռչակման համար, որին անշուշտ նպաստում էին նաև միջազգային բարենպաստ պայմանները: Ինչպես գիտենք, թե՛ Հռոմկլայի կաթողիկոսարանի և թե՛ բուն Կիլիկիայի հոգևորականությունը կարևոր դերակատարում ունեին հայոց պետության կյանքում, և առանձին հոգևորականներ տարբեր տարիներին ոչ միայն հոգևոր ծառայություն են իրականացրել, այլև զբաղեցրել են տարբեր պետական պաշտոններ: Եվ, ահա, սկսած 1190-ական թվականներից՝ Լևոն Մեծագործի թագադրման շուրջ տարվող բանակցային ողջ գործընթացի ժամանակ գործում էին ոչ միայն աշխարհիկ, այլև հոգևոր գործիչները՝ հատկապես Գրիգոր Դ Տղան, Ներսես Լամբրոնացին, Գրիգոր Ապիրատը, Գևորգ Սկևռացին, Հովհաննես Սսեցին և ուրիշները:

Հայտնի փաստ է, որ դեռևս 1180-ական թվականների վերջերին և 1190-ական թվականների սկզբներին հասունացավ Լևոն Մեծագործի թագադրման և Կիլիկիայի հայոց թագավորության հռչակման խնդիրը, որի շուրջ տարվող բանակցություններում Կիլիկիայի դիվանագետների հետ մասնակցեցին նաև բարձրաստիճան հոգևորականներ: Հայ եկեղեցու հեղինակությունը Հռոմի կաթոլիկ եկեղեցու շրջանակներում բարձրացավ խաչակրաց նոր արշավանքների նախօրեին: Հռոմի պապական աթոռը՝ Կղեմես Գ պապը (1187-1191) և Սրբազան կայսրությունը, Կիլիկյան Հայաստանը դիտում էին որպես Հռոմի և խաչակրության հիմնական դաշնակից (Հայոց պատմություն Բ 351): Ժամանակակից հետազոտողներից Լ. Տեր-Պետրոսյանը տեսակետ է հայտնում, համաձայն որի՝ արքայական թագ ձեռք բերելու գաղափարն առաջին անգամ հայոց իշխանապետի և միգուցե հայ հոգևորականության շրջանակներում առաջացել է դեռևս 1189 թ., երբ Հռոմի պապ Կղեմես Գ-ն Կիլիկիայի հայոց իշխանապետից և կաթողիկոս Գրիգոր Դ-ից խնդրել է օգնություն ցուցաբերել դեպի Արևելք շարժվող խաչակրաց արշավանքի մասնակիցներին (Տեր-Պետրոսյան Բ 180): Անշուշտ, հետագա տարիներին վերը նշյալ խնդրի շուրջ շարունակվեցին բանակցությունները, որին էլ ակտիվ դերակատարում ունեցավ թե՛ Կիլիկյան Հայաստանի և թե՛ Հռոմկլայի կաթողիկոսարանի հոգևորականությունը:

Ս. Տեր-Ներսիսյանի դիտարկմամբ՝ Կղեմես պապի կողմից 1189 թ. ուղարկված նամակներից հետո, երբ վերջինս հայերից խնդրում էր օգնել խաչակիրներին, Լևոնը մի պատվիրակություն ուղարկեց Ֆրիդրիխ Շիկամորուսի մոտ: Պատվիրակության անդամների մասին տեղեկություն չունենք, սակայն կարճ ժամանակ անց ուղարկվեց երկրորդ պատվիրակությունը, որը գլխավորում էր Կիլիկյան Հայաստանի հայտնի հոգևորական Ներսես Լամբրոնացին (Տեր-Պետրոսյան Ա 396): Հավանաբար Լամբրոնացու ներդրած ջանքերը տվել էին իրենց արդյունքը, և դա է վկայում պատմիչ Վարդան Արևելցին, որի համաձայն՝ Ֆրիդրիխը նշում է, որ իր մոտ կա թագ և զգեստ (Վարդան Արևելցի 138-139): Գ. Միքայելյանն էլ ավելացնում է, որ իսկապես Լևոնը փորձեց օգտվել Ֆրիդրիխ Շիկամորուսի Արևելք գալուց և նրանից որպես կայսրի ստանալ արքայական թագ (Միքայելյան 149), սակայն հայության հույսերը չարդարացան, քանզի 1190 թ. դժբախտ պատահարի հետևանքով կայսր Ֆրիդրիխ

Շիկամորուսը խեղդվեց Սելևկիա գետում, և Լևոնի թագադրման հարցը որոշակի ժամանակով հետաձգվեց:

Հաջորդ քայլը վերաբերում է 1194 թվականին, երբ հետազոտող Մոլլերի վկայմամբ՝ Միլանում Լևոն Մեծագործի ներկայացուցիչներից մի քանի հոգևորական ներկայացան Հենրիխ Զ-ին՝ արքայական թագի շուրջ բանակցելու հարցերով, սակայն հայկական պատվիրակության քայլերը Արևմուտքում հաջողություն չունեցան (Moller 154): Ու թեև այս տեղեկությունը չի հաստատվում հայ պատմիչների կողմից, այնուամենայնիվ, կարծում ենք, որ, հնարավոր է, հայոց իշխանապետը գաղտնի բանակցություններ էր վարում Արևմուտքի միապետերի հետ հոգևորականության միջոցով:

## Լևոն Ռուբինյանի թագադրումը և Բյուզանդական կայսրը

Հայտնի է, որ 12-րդ դարի 90-ական թվականների կեսերին Լևոնին թագադրելու պատրաստակամություն ցուցաբերեցին տարբեր երկրների միապետեր: Մասնավորապես առաջիններից մեկը բյուզանդական կայսր Ալեքսիոս Գ-ն էր (1195-1203) (Հայ ժողովրդի պատմություն Գ 690): Նրա առաջարկը դրականորեն ընդունվեց Լևոն Բ Ռուբինյանի և Կիլիկիայի պետության վերնախավի կողմից, և որոշվեց շարունակել բանակցությունները ակնկալվող արդյունքին հասնելու համար: Որոշվեց պատվիրակություն ուղարկել կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիս՝ Լևոնի թագի շուրջ կայսրության պայմաններին տեղեկանալու:

Այսպես՝ հայ հոգևորականության մասնակցության մասին առաջինն արձագանքում է պատմիչներից Սմբատ սպարապետը, որը նշում է, որ Լևոն Մեծագործի կողմից որոշվեց պատվիրակություն ուղարկել դեպի Բյուզանդական կայսրության մայրաքաղաք՝ Կոստանդնուպոլիս՝ բանակցություններ վարելու, և դրա ղեկավարումը հանձնվեց ժամանակի առաջադեմ մտավորականներից մեկին՝ Ներսես Լամբրոնացուն (Սմբատ Սպարապետ 207): Վերջինս մասնավորապես նշում է. «*Ի թուին ՈՒԽԶ (646, իմա՝ 1197) առաքէ Լեւոն ի Կոստանդինուպօլիս զարքեպիսկոպոսն տէր Ներսէս, զորդի Օշնին, և զմեծազարմ՝ իշխանն ըզՀալկամն, զեղբայր Բակուրնայ՝ զքեռին իւր, որք գնացեալ անդ և ցուցեալ զկամս սիրոյ Լեւոնի յօժարութեամբ առ նոսա: Եւ զի էր տէր Ներսէս այր իմաստուն և լի գիտութեամբ, և ամենայն առաքինութեամբ զարդարեալ, ժողովեցան առ նա իմաստունքն Յունաց և խօսեցան ընդ նմա բազում աւուրս վասն դավանութեան հաւատոյ ըզնոսա տէր Ներսէս*» (Սմբատ Սպարապետ 207): Ներսես Լամբրոնացու՝ Բյուզանդիայի մայրաքաղաքում լինելու փաստը վկայվում է նաև Ե-ԺԲ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում, որոնցից մեկը կոչվում է «Յիշատակարան դեսպանագնացութեան» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ 292), թեև այլ մանրամասնություններ բանակցություններից չի հայտնում:

Մյուս պատմիչների մոտ նշված այցելության մասին տեղեկությունների գրեթե չենք հանդիպում: Ու թեև Կոստանդնուպոլսում հայկական պատվիրակությանը բավական լավ ընդունելություն են ցուցաբերում, սակայն շուտով առաջանում են տարաձայնություններ դավանաբանական խնդիրների շուրջ, և Ներսես Լամբրոնացին՝ որպես հայկական պատվիրակության ղեկավար, չի նահանջում Հայ առաքելական եկեղեցու դարավոր արմատներից, որից հետո բանակցությունները դադարում են, և հայկական պատվիրակությունը ձեռնունայն վերադառնում է Կիլիկիա: Նշենք նաև, որ հայկական պատվիրակության՝ դեպի Կոստանդնուպոլիս ուղևորության և վարած բանակցությունների վերաբերյալ որոշակի տեսակետներ են հայտնում նաև հետազոտողները:

Այսպես՝ վերը նշյալ խնդրի մասին իր տեսակետն է հայտնել նաև հետազոտողներից Անապատականը: Վերջինս նշում է, որ Ներսես Լամբրոնացին, որը տեղյակ էր բոլոր իրողություններին, որ տեղի էին ունեցել Ներսես Շնորհալու և

Գրիգոր Դ Տղայի օրոք, քաջահմուտ լինելով մեր հայրերի ուղղափառ դավանությանը, ճարտարորեն բանակցության մեջ մտավ հույն բարձրաստիճան հոգևորականության հետ (Անապատական 113): Շարունակելով միտքը՝ հետազոտողը նշում է, որ Ներսես Լամբրոնացին հուսախաբ եղավ՝ տեսնելով հույն հոգևորականության խարդախ կեցվածքն ու կեղծ բարեկամությունը, և այդ պատճառով էլ չկարողացավ համաձայնության գալ նրանց հետ: Վ. Վարդանյանն էլ կարծիք է հայտնում, համաձայն որի՝ Լևոն Բ Ռուբինյանն ու Գրիգոր Ապիրատ կաթողիկոսը դեմ էին Բյուզանդիայի դավանաբանական նկրտումներին (Վարդանյան 173): Նշյալ խնդրի շուրջ հետազոտություն է իրականացրել նաև Վ. Թորոսյանը, որը նույնպես հաստատում է, որ Ներսես Լամբրոնացու գլխավորած պատվիրակությունը Կոստանդնուպոլսում ունեցել է գաղափարական տարաձայնություններ և դեմ է արտահայտվել հույն հոգևորականների առաջարկներին (Թորոսյան 70):

Ի վերջո, հայկական պատվիրակության այցը Բյուզանդական կայսրության մայրաքաղաք անհաջող ավարտ է ունեցել: Սմբատ Սպարապետի հաղորդած մանրամասն տեղեկությունները կարևորվում են նրանով, որ հայկական և օտար սկզբնաղբյուրներում միակն են, որ նշում են հայկական պատվիրակության՝ դեպի Կոստանդնուպոլիս այցի մասին, որի ղեկավարումը հանձնվել է Կիլիկյան Հայաստանի հայտնի հոգևորականներից մեկին՝ Ներսես Լամբրոնացուն: Հասկանալի է նաև, որ տվյալ ժամանակահատվածում հայկական իշխանապետությունը, հաջողություն չունենալով Բյուզանդական կայսրությունում, պետք է փորձեր թագադրման խնդիրը կարգավորել Քրիստոնյա Արևմուտքի միջոցով, քանզի վերջինս տվյալ պահին խիստ շահագրգիռ էր հայոց թագավորությունը ճանաչելու հարցում: Այս խնդրին անդրադառնալով՝ Լ. Տեր-Պետրոսյանն ընդգծում է, որ դեռևս 1190-ականներից մինչև 1198 թվականը այս խնդրի առնչությամբ նամակների, դեսպանների և ամբողջ պատվիրակությունների բազմաթիվ փոխանակումներ են տեղի ունեցել մի կողմից Լևոն իշխանի և հայոց կաթողիկոսների, մյուս կողմից Հռոմի պապերի և գերմանական ու բյուզանդական կայսրերի միջև (Տեր-Պետրոսյան 182): Դրանից կարելի է եզրակացնել, որ մի կողմից հայերը տարբեր երկրների հետ բանակցություններ են վարել Կիլիկիայի հայոց թագավորության հռչակման շուրջ, իսկ մյուս կողմից՝ մեկ անգամ ևս վկայվում է, որ դրանում ակտիվ դերակատարում են ունեցել թե՛ հայոց կաթողիկոսները և թե՛ բարձրաստիճան հոգևորականությունը:

Այսպես՝ արևմտյան ուղևորության և բանակցային որոշակի գործընթացի մանրամասների մասին վկայում է պատմիչ Կիրակոս Գանձակեցին. *«Եւ առաքեաց ի տիեզերահռչակ քաղաք Հռոմայեցւոց առ ինքնակալ կայսրն և առ պապն, զի տացեն նմա հրաման և թագ թագաւորական...»* (Կիրակոս Գանձակեցի 156): Ու թեև Գանձակեցու տվյալները շատ աղքատիկ են և մանրամասնություններ չեն հաղորդում բանակցային գործընթացի մանրամասների և պատվիրակության անդամների մասին, ակնհայտ է, որ դրանք նույնպես ղեկավարել են Լևոն Մեծագործին հավատարիմ հոգևորականները: Այս բանակցությունների արդյունքում անշուշտ որոշվեց հետագա գործընթացը շարունակել տեղում: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ պատմական տվյալ ժամանակահատվածում թե՛ Բյուզանդական կայսրությունը և թե՛ Քրիստոնյա Արևմուտքը փորձեցին օգտվել բարենպաստ պայմաններից և Հայոց եկեղեցուն ստիպել գնալ դավանաբանական զիջումների: Իրավացի տեսակետ է հայտնում նաև նորագույն շրջանի Կիլիկյան Հայաստանի պատմության հետազոտողներից Ա. Բոզոյանը, որի պնդմամբ՝ Հռոմի պապը և բյուզանդացիները փորձում էին բավարարել իրենց եկեղեցաքաղաքական նկրտումները, այսինքն՝ Հայոց եկեղեցուն ստիպել ճանաչել իրենց եկեղեցիների առաջնորդների գերիշխանությունը և կատարել ծիսադավանաբանական համապատասխան զիջումներ (Հայոց պատմություն Բ 352):

**Հռոմի կայսրի ուղարկած թագը Լևոն Ռուբինյանին**

Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ պատմիչ Սմբատը, որը իր աշխատության մեջ չի խոսում արևմտյան ուղևորության մասին, շուտով հիշատակում է Արևելքում ընթացող բանակցային գործընթացը, ինչը արժեքավոր է: Հեղինակը նշում է, որ հայկական մի պատվիրակություն՝ Հովհաննես Սսեցու (որը Լևոն Բ Ռուբինյանի հավատարիմ հոգևորականներից էր) գլխավորությամբ, 1197 թ. մեկնում է Աքքա՝ բանակցությունները շարունակելու Հռոմի պապի ներկայացուցչի հետ. *«Ի սոյն ամի առաքեաց Լեւոն զարքեպիսկոպոսն Սիսոյ զտէր Յոհաննէս յԱքքա, ի խնդիր թագին զոր թագաւորն Ալամանաց առաքեալ էր նմա, զկնի զօրացն որք եկեալ էին անդ»* (Սմբատ Սպարապետ 207): Սմբատի այս վկայությունը հաստատում է այն փաստը, որ, ամենայն հավանականությամբ, Արևմտյան ուղևորության արդյունքում որոշում էր կայացվել բանակցությունները շարունակել Աքքայում, և դրա համար էլ Կիլիկիայի հայկական պատվիրակությունը ժամանել էր այնտեղ՝ հերթական անգամ պատվիրակության ղեկավար ունենալով հայտնի հոգևորականներից մեկին՝ Հովհաննես եպիսկոպոս Սսեցուն:

Գերմանացի հայտնի գիտնական Պետեր Հալֆտերը, որ խորությամբ ուսումնասիրել է պապության և Կիլիկիայի հարաբերությունների պատմությունը, մի տեսակետ է առաջ քաշում, համաձայն որի՝ Կոնրադ Վիտելսբախը, որ գերմանական կայսրության դիվանապետն էր և Մայնցի արքեպիսկոպոսը, 1197 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 9-ը ընկած ժամանակահատվածում բանակցել է Հովհաննես Սսեցու հետ և որոշում կայացրել թագադրելու Կիլիկիայի հայոց իշխանապետին (Halfter 218-219):

Ի վերջո, այս պայքարում հայերը որոշեցին ընդառաջ գնալ Հռոմի պապական աթոռին և Սրբազան կայսրությանը, քանզի Կիլիկիայի հայկական պետությանը քննարկվող ժամանակաշրջանում ավելի ձեռնտու էր դաշնակցել և թագ ստանալ Քրիստոնյա Արևմուտքից, քան օրեցօր թուլացող Բյուզանդական կայսրությունից: Այս խնդրի շուրջ հետաքրքիր տեսակետ է հայտնում նորագույն շրջանի հետազոտողներից Ա. Հովհաննիսյանը: Հեղինակը, ուսումնասիրելով տվյալ ժամանակաշրջանի աղբյուրների, ինչպես նաև գիտական գրականության ստվար մասը, այն համոզմունքն է հայտնում, համաձայն որի՝ նշյալ ժամանակաշրջանում տեղի ունեցավ հայ-բյուզանդական միջեկեղեցական բարիդրացիական հարաբերությունների վերջնական խզումը, սկսվեց հայ-կաթոլիկ միջեկեղեցական հարաբերության մերձեցումը (Հովհաննիսյան 72): Նույն հեղինակի պնդմամբ՝ դեռևս 1190-ական թվականների սկզբներին արդեն կաթողիկոս Գրիգոր Դ Տղան կողմնակից է եղել կաթոլիկ եկեղեցու հետ մերձեցմանը, որի հիմքում ընկած էր այն գաղափարը, որ միգուցե ժամանակավոր զիջողական քայլերի շնորհիվ կաթոլիկ աշխարհը ճանաչի Կիլիկիայում հայոց թագավորության հիմնումը (Հովհաննիսյան 73), ինչը բնականաբար ոչ միայն Կիլիկիայի, այլև ողջ հայության երազանքն էր:

Շուտով Հռոմի պապի ներկայացուցիչ Կոնրադի գլխավորությամբ մի պատվիրակություն ժամանեց Կիլիկիա: Պատվիրակներն իրենց հետ ունեին թագ և բանակցություններ սկսեցին Կիլիկիայի իշխանական վերնախավի և հոգևորականության հետ՝ պահանջելով ընդունել կաթոլիկ եկեղեցու մի շարք կետերը և տալ պարտավորագիր այդ մասին (Կիրակոս Գանձակեցի 149):

Փաստորեն, Կիլիկիայի հայոց պետությունը և Հայոց եկեղեցին կանգնում են լուրջ խնդրի առջև: Մյուս կողմից էլ նրանք լավ էին գիտակցում, որ առանց այս որոշման հնարավոր չէ հարցի լուծումը:

Բնականաբար, Լևոն Մեծագործը պետք է այս հարցը քներ երկրի բարձրաստիճան հոգևորականների հետ և լսեր նրանց կարծիքը: Շուտով Տարսոն քաղաքում տեղի ունեցավ եկեղեցական ժողով, որին մասնակցում էին հոգևորականներ և աշխարհիկ բարձրաստիճան անձնավորություններ:

ժողովականները, լսելով Հռոմի պապական աթոռի պահանջը, միաձայն որոշեցին մերժել և շատ կոշտ դիրքորոշում որդեգրեցին: Անշուշտ, հայ հոգևորականության բռնած դիրքը արդարացի էր, սակայն մյուս կողմից էլ հայոց իշխանապետը լավ էր հասկանում, որ նման պատասխանի դեպքում Հռոմեական Սրբազան կայսրությունը և պապական աթոռը չեն իրականացնի Լևոն իշխանապետի թագադրումը, և այն կարող էր երկար ժամանակով ձգձգվել: Ինչպես նշում է ճանաչված պատմաբան Մ. Օրմանյանը, Լևոնը ստեղծված պայմաններում պատրաստակամություն հայտնեց ստորագրել պապի պատվիրակների առաջարկը (Օրմանյան 1799) և առերես ընդունել այն, սակայն պապի պատվիրակները չբավարարվեցին այդ առաջարկով և պահանջեցին, որ հոգևորականները տան իրենց գրավոր համաձայնությունը:

Ինչպես նկատում ենք, առանց հայ հոգևորականության որոշման հնարավոր չի դառնում Կիլիկիայի հայոց թագավորության հռչակման և Լևոն Մեծագործի թագադրման խնդիրը: Ստեղծվում է բավական բարդ իրավիճակ: Նույն Օրմանյանի պնդմամբ՝ այս մերժումից հետո պապի ներկայացուցիչները թեթևացրին ներկայացվող պահանջները, որից հետո հայոց իշխանապետը կարողացավ համոզել 12 եպիսկոպոսների, որ վերջիններս տան իրենց համաձայնությունը (Օրմանյան 1799):

Ինչո՞վ կարելի էր բացատրել Հռոմի պապի ներկայացուցիչների նման դիրքորոշման փոփոխությունը. անշուշտ, դժվար է միանշանակ պատասխան տալը, թեև կարելի է կռահել, որ նրանք լավ էին գիտակցում, որ 12-րդ դարի վերջերին Կիլիկյան իշխանապետությունն այնքան էր հզորացել, որ վաղ թե ուշ ճանաչվելու էր թագավորություն, և, իհարկե, չէին ցանկանում, որ այլ պետության հովանավորությամբ դա տեղի ունենար: Դրա համար էլ հավանաբար թեթևացրին ներկայացվող պահանջները, որպեսի Լևոն Մեծագործը ճանաչեր իրենց գերիշխանությունը, թեկուզ ձևական:

Քաղաքական այս կարևոր դեպքերի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում միջնադարյան պատմիչներից Կիրակոս Գանձակեցին՝ գրելով, որ Լևոնը համոզեց եպիսկոպոսներին ընդունել պապի ներկայացուցչի թեթևացրած պահանջները՝ նշելով, որ դրանք իրականում չեն կատարվի, դա կեղծ կլինի, որպեսզի ժամանակ շահեն և թագավորությունը հռչակվի. *«Դուք մի ինչ հոգայք վասն այդորիկ, ես հաճեցից զմիտս նոցա առ անգամ մի կեղծաւորութեամբ»* (Կիրակոս Գանձակեցի 157):

Տվյալ պայմաններում Բյուզանդական կայսրության կողմից արված առաջարկի մերժումը և Հռոմի պապական աթոռի ներկայացուցիչների առաջարկների ընդունումը բացատրվում են նրանով, որ Հռոմի պապական աթոռը և Սրբազան կայսրությունը ավելի ուժեղ էին և ավելի օգուտ կարող էին տալ նորաստեղծ հայկական թագավորությանը, քան թուլացող Բյուզանդական կայսրությունը: Վ. Վարդանյանը, հավանաբար հիմնվելով Կիրակոս Գանձակեցու տեղեկությունների վրա, կարծում է, թե Տարսոնի ժողովում Լևոնը կարողացավ հանդարտեցնել հայ եկեղեցականների մտքերը՝ հասկացնելով, որ Հռոմի նկատմամբ դավանական զիջումները լինելու են առերևույթ (Վարդանյան 173): Ճիշտ է նկատել նաև Անապատականը՝ նշելով, որ թեև 12 եպիսկոպոսները Լևոնի խնդրանքով ստորագրեցին դավանաբանական փոփոխությունների համար, սակայն այդ որոշումը Հայ առաքելական եկեղեցու ամբողջական որոշումը չէր (Անապատական 117): Կարելի է համաձայնել հետազոտողի հետ, քանզի թե՛ Կիլիկյան Հայաստանում և թե՛ բուն Հայաստանում կար հոգևորականների մի հսկա զանգված, որ դեմ էր ցանկացած զիջման:

Ի վերջո, պապի պատվիրակ Կոնրադի պահանջով՝ 12 եպիսկոպոսները երդվեցին կատարել պապության ներկայացրած պահանջները, և միայն դրանից հետո Կոնրադ Վիտելսբախի գլխավորությամբ պապական աթոռի ներկայացուցիչները համաձայնեցին թագադրել Լևոնին: Այս խնդրի առնչությամբ իր տեսակետն է արտահայտում նաև նորագույն ժամանակաշրջանի հետազոտողներից Կ.

Մութաֆյանը, համաձայն որի՝ Լևոն Մեծագործի քայլը ճարպիկ քաղաքականություն էր, քանի որ Հռոմի գերակայությունը ամենևին չէր պարտադրում հեռացում հայոց ինքնուրույն եկեղեցուց, իսկ գերմանական կայսեր գերիշխանությունը գերադասելի էր բյուզանդականից, որոնց հետ հայերն ունեին վիճելի հարցեր (Մութաֆյան 404): Շատ հետաքրքիր է նաև ֆրանսիացի հայտնի հայագետ Ռընե Գրուսեի դիտարկումը. Կիլիկիայի հայ հոգևորականությունը և իշխող վերնախավը ոչ մի պահ չկամեցան ուրանալ իրենց դավանանքը և ընդունել երկու բնությունները (Grousset 394): Վերջապես, նշյալ խնդրի վերաբերյալ իր տեսակետն է հայտնում նաև Լ. Տեր-Պետրոսյանը, համաձայն որի՝ Կելեստինոս պապն այնքան միամիտ անձնավորություն չէր, որ հավատար հայերի անկեղծությանը, սակայն վերջինս գերադասեց աչք փակել Լևոն Մեծագործի երկակի խաղի վրա, քանի որ նրա համար գլխավորն ակնկալված դավանաբանական զիջումները չէին, այլ նորաստեղծ թագավորության կողմից իր գերիշանության ճանաչումը (Տեր-Պետրոսյան Բ 194): Եվ սա այն բնութագրական դեպքն է, երբ Հռոմի պապը և հայոց թագավորը կարծես թե լուռ համաձայնությամբ որդեգրել էին միևնույն խաղի կանոնները և եկեղեցական միություն ձևացնելով՝ առաջնորդվել ոչ թե կրոնական, այլ բացառապես քաղաքական նկատառումներով (Տեր-Պետրոսյան Բ 194):

Ի վերջո, հաշվի առնելով միջնադարյան սկզբնաղբյուրների ընձեռած տեղեկությունները, ինչպես նաև գիտական գրականության մեջ առկա տեսակետները՝ հստակ կարող ենք ընդգծել, որ հայ հոգևորականության մի մասն ընդամենը առերես է ընդունել Հռոմի պապի ներկայացուցիչների դավանաբանական փոփոխությունների պահանջը, որպեսզի Լևոն Բ Ռուբինյանը թագադրվի և ճանաչվի Կիլիկիայի հայոց թագավոր: Այլ խոսքով՝ հայ հոգևորականությունը կարևոր և վճռական պահին կանգնել է պետության թիկունքին:

## Լևոն Ռուբինյանի թագադրության հանդեսը

Այս ամենից հետո սկսվեց Լևոն Մեծագործի թագադրման հանդեսի նախապատրաստությունը: Բուն գործընթացին ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին հայ հոգևորականությունը և հատկապես Ներսես արքեպիսկոպոս Լամբրոնացին, որի ղեկավարությամբ էլ կազմակերպվեց հանդիսավոր արարողությունը: Ծեսը կատարվեց ըստ թագավորի օրհնության հռոմեական կարգի, որը Ներսես Լամբրոնացին վաղօրոք հայերեն էր թարգմանել (Հայոց պատմություն Բ 117): Հեթում պատմիչ Կոռիկոսցին Լևոնի թագադրման մասին հետևյալն է գրում. *«Պարոնն Հայոց Լեւոն պսակեցաւ թագիւ եւ եկաւ առաջին թագաւոր ի Կիլիկիա»* (Մաթևոսյան 49): Թագադրության հանդեսը տեղի ունեցավ 1198 թ. հունվարի 6-ին՝ Աստվածահայտնության և Սուրբ Ծննդյան օրը (Ալիշան 469), Կիլիկյան Հայաստանի նշանավոր քաղաքներից մեկում՝ Տարսոնում՝ Սուրբ Սոֆիա եկեղեցում: Դրանում ակտիվ դերակատարում են ունենում Ամենայն հայոց կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատը և այլ հոգևորականներ:

Վերոբերյալ տեղեկությունները հայտնում է Կիլիկյան Հայաստանի պատմության հայտնի մասնագետ Գ. Միքայելյանը, համաձայն որի՝ Լևոն Բ Ռուբինյանի թագադրման հանդեսին ներկա են գտնվել ոչ միայն աշխարհիկ գործիչներ, այլև տասնյակ հոգևոր իշխաններ, հակոբիկների պատրիարք Միքայելը և շատ ուրիշներ (Միքաելյան 160-161): Այն, որ Լևոն Բ Ռուբինյանի օծման և թագադրման գործում կարևոր դերակատարում են ունեցել հայ հոգևորականները, վկայում է նաև ժամանակակից պատմիչներից Սմբատ Սպարապետը, որն իր աշխատության մեջ մեկ առ մեկ հիշատակում է Տարսոնում մասնակից եպիսկոպոսների և արքեպիսկոպոսների անունները և նրանց զբաղեցրած պաշտոնները, ինչը միակ տեղեկությունն է միջնադարյան պատմիչներից՝

1. Տէր Դավիթ արքեպիսկոպոս Մամսուեստիոյ և առաջնորդ սուրբ ուխտին Արքակաղնոյն:
2. Տէր Գրիգորիս արքեպիսկոպոս Կապնուն և առաջնորդ Արիգնոյն:
3. Տէր Յոհաննէս արքեպիսկոպոս Սիսոյ և առաջնորդ Դրազարկուն:
4. Տէր Մինաս արքեպիսկոպոս աստուածաբնակ քաղաքին Երուսաղեմի:
5. Տէր Յուսէփ արքեպիսկոպոս Անտիոքու և առաջնորդ Յիսուանցն:
6. Տէր Կոստանդին արքեպիսկոպոս Անարզաբոյ և առաջնորդ Կաստաղօնին:
7. Տէր Վարդան Արքեպիսկոպոս Լամբրունին և առաջնորդ Սկեւռային:
8. Տէր Ստեփանոս Արքեպիսկոպոս Տարսոնին և առաջնորդ Մլիճոյն:
9. Տէր Թորոս Արքեպիսկոպոս Սելեւկիոյ:
10. Տէր Աստուածատուր եպիսկոպոս Մեծքրուն:
11. Տէր Յոհաննէս եպիսկոպոս Սանվիլանց:
12. Տէր Գէորգ եպիսկոպոս Անդրիասանց:
13. Տէր Կոստանդին եպիսկոպոս Յոհնանց:
14. Տէր Գրիգոր եպիսկոպոս Փիլիպպոսեանց:
15. Տէր Ստեփանոս եպիսկոպոս Բերդուսին:
16. Տէր Մխիթար եպիսկոպոս Ընկուզտին (Սմբատ Սպարապետ 209):

## Եզրակացություն

Փաստորեն, միջնադարյան սկզբնաղբյուրներում առկա տեղեկությունները, ինչպես նաև ժամանակակից գիտական գրականության մեջ առկա տեսակետները վկայում են նրա մասին, որ Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանը և Կիլիկյան Հայաստանի բարձրաստիճան հոգևորականները ակտիվ դերակատարում են ունեցել Կիլիկիայի հայկական թագավորության հռչակման շուրջ տարվող բանակցությունների ողջ գործընթացում՝ սկզբից մինչև Լևոն Մեծագործի թագավոր օծվելը: Անշուշտ, պետության և եկեղեցու համագործակցությունը շարունակվեց նաև Կիլիկիայի հայկական թագավորության պատմության ողջ ընթացքում:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Հովհաննիսյան Արամ. *Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում,* Երևան, 2020:
2. Անապատական *Համառօտ պատմութիւն հայ-լատինական յարաբերութեանց, սկիզբէն մինչեւ 1382,* Անթիլիաս-Լիբանան, 1981:
3. Միքայելյան Գրիգոր. *Կիլիկիայի հայկական պետության պատմություն,* Երևան, 2007:
4. Տեր-Պետրոսյան Լևոն. *Խաչակիրները և հայերը, հ. Ա,* Երևան, 2005:
5. Տեր-Պետրոսյան Լևոն. *Խաչակիրները և հայերը, հ. Բ,* Երևան, 2007:
6. Մաթևոսյան Կարեն. *Հեթում պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը,* Երևան, 2011:
7. Մութաֆյան Կլոդ. *Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում,* Երևան, 2001:
8. Կիրակոս Գանձակեցի. *Պատմութիւն Հայոց,* աշխ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:
9. *Հայ ժողովրդի պատմություն, ակադեմիական հրատարակություն, հ.* Գ, Երևան, 1976:
10. *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դարեր*, կազմ.՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1988:
11. *Հայոց պատմություն, հատոր Բ, միջին դարեր (IV-XVII դարի առաջին կես), գիրք երկրորդ (IX դարի կես-XVII դարի առաջին կես)*, Երևան, 2014:
12. Ալիշան Ղևոնդ. *Սիսուան,* Վենետիկ, 1885:
13. Օրմանյան Մաղաքիա. *Ազգապատում, հ. Ա,* Ս. Էջմիածին, 2001:

14. Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք,* Վենետիկ, 1956.
15. Թորոսյան Վահե. *Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Մեծագործի թագադրման խնդրի շուրջ,* Էջմիածին ամսագիր, 2016, (7):
16. Վարդանյան Վրեժ. *Պահլավունիները հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ,* Երևան, 2008:
17. Վարդան Արևելցի. *Տիեզերական պատմություն,* Վենետիկ, 1862:
18. Moller. Levon I, *Ein armenischer Konig im staufischen Outremer,* Halle (Zalle), 2019, p. 154.
19. Halfter, P. *Das papstum und dic Armenier im Fruhen und Hohen Mitclater.* Von den crsten Kontakten bis zur fixierung der kirchenunkion im jahre 1198, Wien, 1996.
20. Grousset, R. *L Empire du Levant.* Paris, 1949.

## WORKS CITED

1. Hovhannisyan, Aram. *Hayoc ekexecin kilikyan shrjanum* Yerevan, 2020, [*The Armenian Church in the Cilician period*, Yerevan], (in Armenian).
2. Anapatakan. *Hamarot patmutyun hay-latinakan haraberutyanc, skizben minchev 1382*, Antilias-Lebanon, 1981, [*Brief History of Armenian-Latin Relations, from the beginning to 1382*, Antilias-Lebanon], (in Armenian).
3. Miqaelyan Grigor. *Kilikiayi haykakan petutyan patmutyun*, Yerevan, 2007, [*History of the Armenian State of Cilicia*, Yerevan], (in Armenian).
4. Ter-Petrosyan, Levon. *Khachakirnery ev hayery, I,* Yerevan, 2005 [*Crusaders and Armenians, I,* Yerevan], (in Armenian).
5. Ter-Petrosyan, Levon. *Khachakirnery ev hayery, II,* Yerevan, 2007[*Crusaders and Armenians, II*, Yerevan], (in Armenian)..
6. Matevosyan, Karen. *Hetum patmich Korikoscin ev nra jamanakagrutyuny*. Yerevan, 2011, [*Letographer Hetum of Korikos and his letography*, Yerevan], (in Armenian).
7. Mutafyan, Klod. *Kilikian kaysrutyunnery khachmerukum*, Yerevan, 2001, [*Cilicia at the Crossroads of Empires*, Yerevan], (in Armenian).
8. Kirakos Gandzakeci. *Patmutyun Hayoc* By K. Melik-Ohanjanyan. Yerevan. 1961, [*History of Armenia*, Yerevan], (in Armenian.
9. *Hay joxovrdi patmutyun*, akademiakan hratarakutyun, III, Yerevan, 1976, [*History of Armenian Nation*, Yerevan], (in Armenian).
10. *Hayeren dzeragreri hishatakaranner, V-XII darer*. By A. Matevosyan. Yerevan, 1988, [*Diaries of Armenian Manuscripts of the 5th-12th centuries*, Yerevan], (in Armenian).
11. *Hayoc patmutyun, II, mijin darer (IV-XVII dari arajin kes), girq II (IX dari kes-XVII dari arajin kes)*, Yerevan, 2014, [*History of the Armenians, II, Middle Ages (IV-XVII first half of the century)*, Yerevan], (in Armenian).
12. Alishan, Khevond, *Sisvan*, Venetik, 1885 [*Sisvan*, Venice], (in Armenian).
13. Ormanyan, Maghakia. *Azgapatum, I,* Etchmiadzin, 2001, [*Azgapatum*, Etchmiadzin], (in Armenian).
14. Smbat Sparapet. *Taregirk*. Venetik, 1956, [*Letography*, Venice], (in Armenian).
15. Torosyan, Vahe. *Kilikiayi hayoc tagavor Levon Mecagorci tagadrman xndri shurj*, Etchmiadzin amsagir, 2016 (7), [*On the Problem of the Enthronement of the King of Cilician Armenia Levon Metsaghorts*, Etchmiadzin], (in Armenian).
16. Vardanyan, Vrej. *Pahlavuninery hayoc petakanutyan ev hogevor anagartutyan pahapanner*. Yerevan, 2008, [*Guardians of the Armenian State of Pahlavuni and Spiritual Purity*, Yerevan], (in Armenian).
17. Vardan Arevelci. *Tiezerakan patmutyun*. Venetik, 1862, [*The World History*, Venice], (in Armenian).

# THE ROLE OF THE ARMENIAN CLERGY IN THE PROCLAMATION OF THE ARMENIAN KINGDOM OF CILICIA AND THE QUESTION OF THE ANOINTING OF LEVON THE MAGNIFICENT AS A KING

**NELLI ZHAMKOCHYAN**
*Yerevan State University, Faculty of Theology,*
*Department of Theology and History of the Armenian Church,*
*Senior Laboratory Assistant, Ph.D Student;*
*Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to study the process of the recognition of the Armenian Kingdom of Cilicia and the proclamation of Levon the Magnificent as king, and the role of the papal seat of Rome and the Holy Empire in it.

In our work, we have set the task of highlighting the details of the process of recognition of the Kingdom of Cilicia and the role of the representatives of the papal seat.

Among the methods used are the historical-analytical method and the method of analysing contemporary scientific literature.

The research undertaken allowed to draw the following conclusions. The establishment of the Armenian Kingdom of Cilicia took place under difficult international conditions, in which the Armenian clergy of Cilicia played an active role. The visits of Armenian delegations to Constantinople, the capital of the Byzantine Empire, and a number of Western European countries, as well as the position and steps taken by the Armenian clergy regarding the change of religious issues, played an important role in the creation of the Armenian state. The role played by Archbishop Nerses of Lambrona was of particular importance.

Levon B. Rubinyan was apointed the Armenian King of Cilicia by the representative of the Roman Catholic Church, Archbishop Konrad Wittelsbach of Mainz, as well as by Armenian Catholicos Grigor Apirat. All diocesan leaders and high-ranking clergy of the Armenian state of Cilicia were present at the coronation ceremony.

**Keywords:** *Cilicia, Levon the Great, church, clergy, kingdom, papal see, Byzantine Empire, bishop, denomination, delegation.*

# РОЛЬ АРМЯНСКОГО ДУХОВЕНСТВА В ПРОВОЗГЛАШЕНИИ КИЛИКИЙСКОГО АРМЯНСКОГО ЦАРСТВА И ВОЗВЕДЕНИИ ЛЕВОНА ВЕЛИКОГО НА ПРЕСТОЛ

**НЕЛЛИ ЖАМКОЧЯН**
*старший лаборант и соискатель кафедры Богословия и истории*
*армянской церкви факультета Богословия*
*Ереванского Государственного Университета,*
*г. Ереван, Республика Армения*

Цель настоящей статьи – рассмотреть процесс признания Киликийского армянского королевства и провозглашения Левона II Рубиняна армянским королем, а также роль Римского Папского Престола в этих событиях.

Основной задачей нашего исследования является выявление подробностей процесса признания Киликийского армянского царства и значения участия представителей Римского Папского Престола.

Среди используемых методов можно выделить историко-аналитический метод и метод анализа современной научной литературы.

В результате исследования было сделано следующее заключение. Основание Армянского Киликийского королевства происходило в сложных международных условиях, в которых активное участие сыграло армянское духовенство Киликии. Важную роль в создании армянского государства сыграли визиты армянской делегаций в столицу Византийской империи Константинополь и в ряд стран Западной Европы, а также позиция и поведение армянского духовенства касательно изменений конфессиональных вопросов. Особый интерес представляет деятельность архиепископа Тарсона Нерсеса Ламбронаци.

Левон II Рубинян был помазан армянским царем Киликии. представителем Римско-католической церкви, архиепископом Майнца Конрадом Виттельсбахом, а также армянским католикосом Григором Апиратом. На церемонии помазания царя в полном составе присутствовали все епархиальные лидеры армянского государства Киликии и высокопоставленное духовенство

**Ключевые слова:** *Киликия, Левон Великий, церковь, духовенство, королевство, папский престол, Византийская империя, епископ, конфессия, делегация.*